

ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության և Լեհաստանի Հանրապետության “ԷԿՈՏԵԽ ՊՈԼՍԿԱ” Ընկերության միջև համագործակցության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը և Լեհաստանի Հանրապետության “ԷԿՈՏԵԽ ՊՈԼՍԿԱ” Ընկերությունը, այսուհետ՝ Կողմեր,

կարևորելով վտանգավոր նյութերով պայմանավորված արտակարգ իրավիճակների կանխարգելումն ու դրանց ենթակա հետևանքներից բնակչության և տարածքների պաշտպանության իրականացումը,

համաձայնելով, որ տեխնածին բնույթի վտանգները լուրջ սպառնալիք են մարդկանց կյանքի և առողջության, ինչպես նաև շրջակա միջավայրի համար,

կարևորելով այդ գործում միջազգային համագործակցության դերն ու նշանակությունը,

ընդունելով բնապահպանական անվտանգության ապահովման անհրաժեշտությունը,

ընդունելով, որ Կոտայքի մարզի Ողջաբերդ բնակավայրի հարևանությամբ գտնվող “Նուբարաշեն թունաքիմիկատների գերեզմանոցը” և Լոռու մարզի Ալավերդի քաղաքի հարևանությամբ գտնվող “Արսենի միացությունների գերեզմանոցը” լուրջ վտանգ են ներկայացնում բնակչության կյանքի և շրջակա միջավայրի համար.

ի կատարումն ՀՀ ԱԱԽ քարտուղար Ա.Բաղդասարյանի 2010թ. նոյեմբերին Լեհաստանի Հանրապետություն կատարած այցի շրջանակներում ձեռք բերված պայմանավորվածությունների.

պայմանավորվեցին հետևյալի շուրջ.

1. Նպատակը և շրջանակները

Ծավալել համատեղ ուսումնասիրություններ ՀՀ տարածքում գտնվող թունաքիմիկատների ուսումնասիրման, վնասազերծման, ինչպես նաև նոր գերեզմանոցների բացահայտման ուղղությամբ:

Որպես առաջնահերթություն սահմանել Նուբարաշենի և Լոռու մարզի թունաքիմիկատների վնասազերծման աշխատանքները:

2. Կողմերի իրականացվելիք աշխատանքները

ա) “ԷԿՈՏԵՆ ՊՈԼՍԿԱ” Ընկերությունն աշխատանքներ է իրականացնելու հետևյալ ուղղություններով.

ուսումնասիրությունների իրականացում թունաքիմիկատների գերեզմանոցի տեղակայման և դրանում վտանգավոր նյութերի պարունակության որոշման նպատակով,

փորձաքննության անցկացում ազգային և միջազգային փորձագետների (թունաբաններ, երկրաբաններ, հողի և ջրի աղտոտվածության հարցերի մասնագետներ, և այլն) ներգրավմամբ պարզելու համար դրանց վնասակար ազդեցությունը մարդկանց կյանքի և առողջության ու շրջակա միջավայրի վրա և արդյունքների փոխանցում ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը,

թունաքիմիկատների վնասազերծման մեթոդների և ձևերի մշակում,

անցկացնել լաբորատոր թեստեր, ջրաբեր գոտիներ թունաքիմիկատների թափանցումը կանխելու, ինչպես նաև՝ սողանքային երևույթները կանխարգելելու նպատակով,

վտանգավոր նյութերի վերամշակման և չեզոքացման մեթոդների մշակում,

վտանգավոր նյութերի վերամշակման և ոչնչացման իրականացում,

թունաքիմիկատների գերեզմանոցի տարածքի վերականգմանն ուղղված առաջարկությունների մշակում:

բ) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը աշխատանքներ է իրականացնելու հետևյալ ուղղություններով.

մանրամասն փորձաքննության անցկացում ազգային և միջազգային փորձագետների (թունաբաններ, երկրաբաններ, հողի և ջրի աղտոտվածության հարցերի մասնագետներ, և այլն) ներգրավմամբ պարզելու համար դրանց վնասակար ազդեցությունը մարդկանց կյանքի և առողջության ու շրջակա միջավայրի վրա,

ապահովում է անհրաժեշտ տեղեկատվության տրամադրումը,

անհրաժեշտ մասնագիտական աջակցություն է ցուցաբերում “ԷԿՈՏԵՆ ՊՈԼՍԿԱ” Ընկերության կողմից իրականացվող աշխատանքներին,

ապահովում է վերոնշյալ միջոցառումների իրականացման հետ կապված ազգային ընթացակարգերի պարզեցված կարգով իրականացման հարցերը,

համակարգում է գերեզմանոցի տարածքի և իրականացվող գործընթացների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումները,

համակարգում է վերոնշյալ հարցերով Հայաստանի Հանրապետությունում գործող այլ հնարավոր միջազգային մասնակիցների (ԵՄ, ՄԱԶԾ, և այլն) հետ համագործակցության իրականացումը:

3. Ընդհանուր դրույթներ

ա) Կողմերից յուրաքանչյուրը քայլեր է ձեռնարկում միջազգային դոնոր կազմակերպություններից ֆինանսներ հայթայթելու և սեփական պարտավորությունների իրականացման համար:

բ) Կողմերը սույն Հուշագրի իրականացման նպատակով կարող են կնքել այլ գրավոր պայմանագրեր, կարող են անցկացնել երկկողմ և բազմակողմ խորհրդակցություններ, աշխատանքային հանդիպումներ, քննարկումներ և այլն:

գ) Կողմերի ընդհանուր համաձայնությամբ սույն Հուշագրում կարող են կատարվել լրացումներ:


4. Ուժի մեջ մտնելը


Սույն Հուշագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է սույն Հուշագրի իրականացման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում:

Սույն Հուշագիրը ստորագրված է Երևանում 2010թ. դեկտեմբերի 16-ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության
արտակարգ իրավիճակների
նախարար

“ԷԿՈՏԵԽ ՊՈԼՍԿԱ” Ընկերության
նախագահ


Արմեն Երիցյան


Դոմինիկ Վոյեվոդկա